ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտոնի տեսակը	Ղեկավար և մասնագիտական
Կազմակերպությունը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե	ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5
Դիմելու վերջնաժամկետ	3/13/2023

Կանաչ տնտեսություն բաժնի ընդհանուր նկարագիրը

Որպես զարգացման տեխնոլոգիա և վարքագծային մոդել՝ կանաչ տնտեսությունը ներառում է քաղաքականության համարժեք շրջանակ, մեխանիզմներ ու գործիքակազմ:

ՀՀ կառավարության կողմից կարևորվում և քայլեր են ձեռնարկվում կանաչ և կայուն տնտեսական զարգացման ուղղությամբ, այդ թվում՝ նորարարական լուծումների, կանաչ պլանավորման ու ներդրումների, առաջադեմ տեխնոլոգիաների ներգրավման, ինչպես նաև նոր բիզնես մոդելների հնարավոր կիրառմամբ:

Կանաչ տնտեսության սկզբունքներին անցումը հնարավորություն է տալիս գործարար նախաձեռնությունների, ստեղծարար բիզնեսների, ինովացիոն ու տեխնոլոգիական առաջընթացի, ինչպես նաև կանաչ աշխատատեղերի ստեղծման, կայուն արդյունաբերության և շրջանաձև տնտեսության զարգացման, կենսաբազմազանության, կանաչ և կայուն գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի համար: Վերջինս կնպաստի նաև համապատասխան նախադրյալների ստեղծմանը բնական ռեսուրսների վերամշակման միջոցով միջանկյալ կամ վերջնական սպառման «մաքուր» արտադրանքի արտադրություն կազմակերպելու Հայաստանում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1	Կանաչ ու կայուն տնտեսական զարգացման քաղաքականության, կանաչ տնտեսության զարգացմանը նպաստող համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշակման և իրականացման աշխատանքներ:
2	Կանաչ ներդրումների, ինչպես նաև կանաչ բաղադրիչով նորարարական լուծումներով արտադրության կազմակերպումը խթանող քաղաքականության և բարենպաստ օրենսդրական դաշտի մշակման աշխատանքներ:
3	Մասնակցել փոքր և միջին ձեռնարկությունների համար նպատակային բիզնես փաթեթների և բիզնես ձևանմուշների մշակման աշխատանքներին:
4	Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման հնարավորությունների՝ դրանից բխող քաղաքականության և իրավական ակտերի ուսումնասիրման և մշակման աշխատանքներ:
5	Տնտեսավարող սուբյեկտներին կանաչ տնտեսությանն անցման գործընթացի նպաստման աշխատանքներ:

6	Կանաչ և կայուն տնտեսական զարգացմանը միտված իրազեկման և ուսուցողական աշխատանքների կազմակերպում:

Կրթություն և աշխատանքային փորձ
• Բարձրագույն կրթություն • Առաջատար տեխնոլոգիաների օգտագործման գիտելիքներ • Բիզնես կամ կառավարչական խորհրդատվության հավաստագրերը կդիտվեն որպես առավելություն:

Հմտություններ
• **Հաղորդակցություն**. շահագրգիռ կողմերի հետ փոխհարաբերությունների ստեղծում և արդյունավետ հաղորդակցվելու հմտություն՝ հեռախոսով և անհատական հանդիպումների միջոցով: • **Ծրագրի կառավարում**. ծրագրի փուլային կառավարում և ծրագրի առաջընթացի մասին զեկուցում ըստ ժամանակացույցի: Բանակցություններ վարելու հմտություն՝ կառավարման շրջանակի և ակնկալիքների համատեքստում: • **Գրավոր խոսք**. պարզ, հակիրճ, գեղագիտական և պրոֆեսիոնալ խոսք կառուցելու կարողություն: • **Office գործիքների տիրապետում**. Microsoft Office համակարգի արդյունավետ օգտագործման հմտություն՝ PowerPoint, Excel, Word, ինչպես նաև բովանդակության կառավարման այլ գործիքների գործածման իմացություն, ինչպիսին է SharePoint-ը: • **Հարմարվողականություն**. դինամիկ և փոփոխվող միջավայրում աշխատելու, ժամանակի արդյունավետ կառավարելու հմտություն:

Էկոնոմիկայի նախարարության առաջարկը
• Դինամիկ աշխատանք • Մրցունակ աշխատավարձ • Վերապատրաստման հնարավորություն • Յուրօրինակ մասնագիտական փորձ և հմտություններ

Ինքնակենսագրությունն (CV) ուղարկել *մինչև 2023 թ. մարտի 13-ը ներառյալ hr@mineconomy.am հասցեին՝ նշելով նախընտրած աշխատանքի անվանումը և կցելով ուղեկցող նամակ (cover letter): Հեռախոս՝ 011 597235*